



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՊԱԼԱՏԻ ԽՈՐՀՐԴԻՆ ԱՌԸՆԹԵՐ
ԳԻՏԱՎԵՐԼՈՒԾԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆԻ ԿԱՐԾԻՔ
(AMICUS CURIAE) № 04/16**

22.09.2016թ.

ք. Երևան

Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի (այսուհետ՝ Պալատ) խորհրդին առընթեր գիտավերլուծական կենտրոնը (այսուհետ՝ Կենտրոն), քննարկելով Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգրքի (ընդունվել է 17.06.1998թ., ուժի մեջ է մտել 01.01.1999թ., ՀՕ-247)¹ 223-րդ հոդվածի 1-ին մասի՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրության համապատասխանության հարցը,

Պ Ա Ր Զ Ե Ց

Քաղաքացի Համլետ Ամիրյանը (այսուհետ՝ Դիմող) անհատական սահմանադրական դիմումով ՀՀ Սահմանադրական դատարանից խնդրել է որոշել Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգրքի (ընդունվել է 17.06.1998թ., ուժի մեջ է մտել 01.01.1999թ., ՀՕ-247) 222-րդ հոդվածի 2-րդ մասի, 223-րդ հոդվածի, 229-րդ հոդվածի 3-րդ մասի և նշված դրույթների՝ ձևավորված իրավակիրառական պրակտիկայի՝ ՀՀ Սահմանադրության 61-րդ հոդվածի 1-ին մասի և 63-րդ հոդվածի 1-ին մասին համապատասխանության հարցը:

ՀՀ Սահմանադրական դատարանը անհատական դիմումի ընդունելիության հարցի վերաբերյալ որոշմամբ մերժել է դիմումի ընդունումը ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 222-րդ հոդվածի 2-րդ մասի մասով, 223-րդ հոդվածի 2-րդ և 3-րդ մասերի մասով և 229-րդ հոդվածի 3-րդ մասի մասով:

Նույն դատական կազմի որոշմամբ Դիմողի դիմումը ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 223-րդ հոդվածի 1-ին մասի՝ ՀՀ Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու մասով ընդունվել է քննության: Նիստը նշանակված է 2016թ. հոկտեմբերի 4-ին:

¹ Տե՛ս ՀՀՊՏ 1998.09.09/20(53):

Դիմողը գտնում է, որ իր կողմից վիճարկվող դրույթները չեն ապահովում իրավական որոշակիություն, որի արդյունքում ստեղծվում է անհստակություն նշված դրույթների կիրառման առնչությամբ: Ըստ դիմողի՝ վիճարկվող դրույթները չեն ապահովում ստորադաս դատարանի դատական ակտը վերադասության կարգով բողոքարկելու եղանակով անձի դատական պաշտպանության սահմանադրական իրավունքի արդյունավետ իրացում:

Դիմողի կարծիքով՝ վիճարկվող դրույթներին դատական պրակտիկայում տրված մեկնաբանությունը հակասում է ՀՀ Սահմանադրության 61-րդ և 63-րդ հոդվածներին:

Ուստի, Դիմողը խնդրել է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 222-րդ հոդվածի 2-րդ մասի, 223-րդ հոդվածի, 229-րդ հոդվածի 3-րդ մասի դրույթները և դրանց իրավակիրառական պրակտիկան ճանաչել Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 61-րդ և 63-րդ հոդվածներին հակասող և անվավեր:

ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄՆԵՐ

Դատական պաշտպանության, արդար դատաքննության իրավունքի և արդարադատության մատչելիության, ինչպես նաև իրավական որոշակիության սահմանադրական սկզբունքների բովանդակությունը ՀՀ Սահմանադրական դատարանի և Եվրոպական դատարանի դատական պրակտիկային համապատասխան մի շարք գործերով արդեն իսկ բացահայտվել է Գիտա-վերլուծական կենտրոնի կողմից նախկինում տրված եզրակացություններով:

ՀՀ գործող Սահմանադրությամբ անձի՝ դատական պաշտպանության իրավունքն ամրագրող սահմանադրաիրավական նորմերի բովանդակությունը հետևյալն է.

Հոդված 61. Դատական պաշտպանության իրավունքը և մարդու իրավունքների պաշտպանության միջազգային մարմիններ դիմելու իրավունքը

1. Յուրաքանչյուր ոք ունի իր իրավունքների և ազատությունների արդյունավետ դատական պաշտպանության իրավունք:

...

Հոդված 63. Արդար դատաքննության իրավունքը

1. Յուրաքանչյուր ոք ունի անկախ և անաչառ դատարանի կողմից իր գործի արդարացի, հրապարակային և ողջամիտ ժամկետում քննության իրավունք:

...

Նշված սահմանադրաիրավական նորմերը համանման բովանդակությամբ սահմանված էին մինչև 2015թ. դեկտեմբերի 6-ի հանրաքվեով ընդունված Սահմանադրության 18 և 19-րդ հոդվածներում, որոնց վերաբերյալ ՀՀ սահմանադրական դատարանն իր դիրքորոշումն է արտահայտել 2006թ. հոկտեմբերի 18-ի ՍԴՈ-652, 2006թ. նոյեմբերի 16-ի ՍԴՈ-665, 2007թ. ապրիլի 9-ի ՍԴՈ-690 և մի շարք այլ որոշումներում:

Հարկ է նշել, որ անձի դատական պաշտպանության իրավունքի բովանդակության բաղկացուցիչ մասն է կազմում նաև վերադասության կարգով դատական ակտերի վերանայման ինստիտուտը: ՀՀ Սահմանադրական դատարանն իր 2007թ. ապրիլի 9-ի թիվ ՍԴՈ-690 որոշման մեջ մասնավորապես արտահայտել է հետևյալ իրավական դիրքորոշումը.

«Սահմանադրական դատարանը գտնում է, որ սահմանադրաիրավական վերոհիշյալ նորմերի ընդհանուր բովանդակությունից հետևում է.

...գ) ընթացիկ օրենսդրության խնդիրն է նյութական և ընթացակարգային նորմերի միջոցով սահմանել ու մանրամասնել ինչպես ՀՀ վճարելի դատարանի սահմանադրական կարգավիճակից բխող, այնպես էլ ընդհանուր իրավասության և մասնագիտացված ստորադաս դատարանների լիազորությունների շրջանակը, իրականացման կարգն ու պայմանները...»:

Կամ, ՀՀ Սահմանադրական դատարանն իր 08.10.2008 թիվ ՍԴՈ-765 որոշմամբ արձանագրել է.

«Մարդու իրավունքների եվրոպական դատարանի՝ հստակ ձևավորված նախադեպային իրավունքի համաձայն՝ Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին կոնվենցիան Պայմանավորվող պետություններին չի պարտադրում ստեղծել վերաքննիչ կամ վճարելի դատարաններ, այնուամենայնիվ, եթե ստեղծվել է, պետք է ապահովվի, որ շահագրգիռ անձինք այդ դատարաններում ևս օգտվեն Կոնվենցիայի 6-րդ հոդվածով նախատեսված՝ արդար դատաքննության հիմնարար երաշխիքներից, այդ թվում՝ նաև քաղաքացիական իրավունքների և պարտականությունների կապակցությամբ դատարանի մատչելիությունը:

Իսկ 15.07.2011թ. թիվ ՍԴՈ-984 որոշմամբ ՀՀ Սահմանադրական դատարանը հատուկ նշել է. «Սահմանադրական դատարանի որոշման հիման վրա **դատական ակտերի վերանայման ինստիտուտի** ողջ բովանդակությունը հանգում է նրան, որ այդ ինստիտուտի միջոցով **ապահովվում է խախտված սահմանադրական իրավունքների վերականգնումը**: Խախտված իրավունքների վերականգնումը պահանջում է խախտման արդյունքում տվյալ անձի համար առաջացած բացասական հետևանքների վերացում, ինչն իր հերթին պահանջում է հնարավորինս վերականգնել մինչև իրավախախտումը գոյություն ունեցած վիճակը (restitutio in integrum): Այն դեպքում, երբ

անձի սահմանադրական իրավունքը խախտվել է օրինական ուժի մեջ մտած դատական ակտով, այդ իրավունքի վերականգնման նպատակով մինչև իրավախախտումը գոյություն ունեցած վիճակի վերականգնումը ենթադրում է այնպիսի վիճակի ստեղծում, որը գոյություն է ունեցել տվյալ դատական ակտի բացակայության պայմաններում...»:

Ինչ վերաբերում է իրավական որոշակիության սկզբունքին, ապա այն հանդիսանում է պետական իշխանության նկատմամբ վստահության և իրավական պետության սկզբունքների կարևոր բաղադրատարրերից մեկը: Այս կապակցությամբ հարկ է նշել, որ ՀՀ սահմանադրական դատարանն իր պրակտիկայում բազմիցս անդրադարձել է **լեգիտիմ ակնկալիքների հանդեպ հարգանքի** սկզբունքին:¹

«Իրավական որոշակիության, իրավական անվտանգության և օրինական ակնկալիքների իրավունքի պաշտպանության սկզբունքները հանդիսանում են իրավական պետության ու իրավունքի գերակայության երաշխավորման անբաժանելի տարրերը: Սահմանադրական դատարանը 2006թ. ապրիլի 18-ի ՍԴՈ-630 որոշման մեջ, մասնավորապես, արձանագրել է, որ «...օրենքը պետք է համապատասխանի նաև Մարդու իրավունքների եվրոպական դատարանի մի շարք վճիռներում արտահայտված այն իրավական դիրքորոշմանը, համաձայն որի՝ որևէ իրավական նորմ չի կարող համարվել «օրենք», եթե այն չի համապատասխանում իրավական որոշակիության (*res judicata*) սկզբունքին, այսինքն՝ ձևակերպված չէ բավարար աստիճանի հստակությամբ, որը թույլ տա քաղաքացուն դրա հետ համատեղելու իր վարքագիծը»: Առավել ևս իրավունքի գերակայության սկզբունքի որդեգրման շրջանակներում օրենքում ամրագրված իրավակարգավորումները պետք է **անձի համար կանխատեսելի դարձնեն իր իրավաչափ սպասելիքները:** Բացի դրանից, իրավական որոշակիության սկզբունքը, լինելով իրավական պետության հիմնարար սկզբունքներից մեկը, ենթադրում է նաև, որ իրավահարաբերությունների բոլոր սուբյեկտների, այդ թվում՝ իշխանության կրողի գործողությունները պետք է լինեն կանխատեսելի ու իրավաչափ»:²

Սույն սահմանադրաիրավական վեճի շրջանակներում (ՀՀ Սահմանադրական դատարանում քննության ընդունված մասով) վիճարկվող քաղաքացիադատավարական նորմի՝ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 223-րդ հոդվածի 1-ին մասի բովանդակությունը հետևյալն է.

Հոդված 223. Վճարել բողոք բերելու իրավունք ունեցող անձինք

¹ Տե՛ս, օրինակ, ՀՀ սահմանադրական դատարանի 04.05.2010 թիվ ՍԴՈ-881, 09.09.2008 թիվ ՍԴՈ-758 որոշումները:

² ՀՀ սահմանադրական դատարանի 02.04.2014թ. թիվ ՍԴՈ-1142 որոշումը:

1. Ստորադաս դատարանի գործն ըստ էության լուծող դատական ակտը վճռաբեկ դատարանում բողոքարկելու իրավունք ունեն՝

1) գործին մասնակցող անձինք.

2) գլխավոր դատախազը և նրա տեղակալները՝ պետական շահերի պաշտպանության հարցերով:

Հարկ է նշել, որ մինչև «Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» 28.11.2007թ. ՀՕ-277-Ն ՀՀ օրենքով՝ օրենսգրքում կատարված փոփոխությունները օրենսգրքի 223-րդ հոդվածը, սահմանելով վճռաբեկ բողոք բերելու իրավասություն ունեցող սուբյեկտների շրջանակը, դրանում ներառել էր նաև գործին մասնակից չդարձած անձանց, որոնց իրավունքների և պարտականությունների վերաբերյալ վճիռ է կայացվել:

«ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի դիմումի հիման վրա՝ Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգրքի 228-րդ հոդվածի երկրորդ մասի՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործով 14.09.2010թ. թիվ ՍԴՈ-914 որոշմամբ ՀՀ Սահմանադրական դատարանն անդրադարձել է նաև օրենսգրքի այն կարգավորումներին, որոնք երաշխավորում և ապահովում են գործին մասնակից չդարձած անձանց դատական պաշտպանության իրավունքի իրացումը:

Նշված որոշմամբ Սահմանադրական դատարանը գտել է, որ չնայած նրան, որ օրենսգրքի վերոհիշյալ 223-րդ հոդվածում գործին մասնակից չդարձած անձինք մատնանշված չեն որպես վճռաբեկ բողոք բերելու իրավունք ունեցող անձինք, այնուամենայնիվ, նշված անձանց վճռաբեկ բողոք բերելու իրավունքն ամրագրված է օրենսգրքի՝ «Վճռաբեկ բողոք բերելու ժամկետները» վերտառությամբ 229-րդ հոդվածի 3-րդ կետում, որի համաձայն՝ գործին մասնակից չդարձած այն անձինք, որոնց իրավունքների և պարտականությունների վերաբերյալ կայացվել է գործն ըստ էության լուծող դատական ակտ, իրավունք ունեն վճռաբեկ բողոք բերելու սկսած այն օրվանից՝ երեք ամսվա ընթացքում, երբ իմացել են կամ կարող էին իմանալ նման դատական ակտի կայացման մասին:

Օրենսգրքի 223, 228-րդ հոդվածների և 229-րդ հոդվածի 3-րդ կետի ուսումնասիրությունից բխում է, որ գործին մասնակից չդարձած անձանց՝ դատարանի մատչելիության իրավունքն ամրագրված է ոչ թե օրենսգրքի՝ «Վճռաբեկ բողոք բերելու իրավունք ունեցող անձինք» վերտառությամբ 223-րդ հոդվածում, այլ «Վճռաբեկ բողոք բերելու ժամկետները» վերտառությամբ 229-րդ հոդվածի 3-րդ կետում:

¹ Տե՛ս ՀՀՊՏ 2007.12.26/66(590):

Այսպիսով, քաղաքացիադատավարական նշված դրույթներից և դրանց վերաբերյալ սահմանադրական դատարանի վերը նշված մեկնաբանություններից հետևում է, որ **օրենսդրական նշված փոփոխության արդյունքում առկա չէ օրենսդրական բացի այնպիսի խնդիր, որն ստեղծի անձի դատական պաշտպանության իրավունքի խախտման վտանգ կամ վերացնի անձի դատական պաշտպանության իրավունքի իրացման հնարավորությունը:**

Վեճի առարկա հանդիսացող դրույթի և դրա հետ համակարգային կապի մեջ գտնվող վերը թվարկված քաղաքացիադատավարական մյուս նորմերի իրավական որոշակիության կապակցությամբ ևս ՍԴՈ-914 որոշմամբ ՀՀ Սահմանադրական դատարանն արձանագրել է, որ կոնկրետ դեպքում օրենսդրական փոփոխությունների արդյունքում իրավակարգավորման ենթադրյալ բացի առկայությունը պայմանավորված չէ օրենքի նորմի անորոշությամբ և առկա է իրավակարգավորման հստակություն:

Իրավական կարգավորման տեսանկյունից, փաստորեն, համաձայն ՀՀ Սահմանադրական դատարանի 14.09.2010թ. թիվ ՍԴՈ-914 որոշման՝ գործին մասնակից չդարձած անձի դատական պաշտպանության իրավունքը նախատեսված է ոչ թե ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 223-րդ հոդվածի 1-ին մասում, այլ՝ 229-րդ հոդվածի 3-րդ կետում, ուստի՝ այս իմաստով **օրենսդրական բաց առկա չէ:** Խնդրո առարկա իրավադրույթը **իրավական որոշակիության տեսնայունից ևս կասկած չի հարուցում** համաձայն ՀՀ Սահմանադրական դատարանի վերոնշյալ որոշման:

Ուստի, սույն գործով հատկապես անհրաժեշտ է պարզել, թե իրավակիրառ պրակտիկայում արդյո՞ք վիճարկվող նորմի կիրառմամբ առաջանում է գործին մասնակից չդարձված անձի դատական պաշտպանության իրավունքի խախտման վտանգ:

Սույն գործով դիմողի կողմից ներկայացված անհատական սահմանադրական դիմումում վերջնական դատական ակտով՝ ՀՀ վճռաբեկ դատարանի 06.04.2016թ. թիվ ԵԿԴ/0219/02/09 որոշմամբ դիմողի նկատմամբ, ի թիվս այլնի, կիրառվել է նաև ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 223-րդ հոդվածի 1-ին մասի դրույթը: Այնքանով, որքանով անձը զրկվում է իր նկատմամբ կայացված դատական ակտը վերադատության կարգով բողոքարկելու իրավունքից այն պատճառաբանությամբ, որ գործին մասնակից չդարձված անձը նախատեսված չէ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 223-րդ հոդվածի 1-ին մասում որպես վճռաբեկ բողոք բերելու իրավունք ունեցող անձ, իրավակիրառական պրակտիկայի այդպիսի մեկնաբանությամբ խախտվում է անձի դատական պաշտպանության իրավունքը:

Ելնելով վերոգրյալից, կարծում ենք, ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 223-րդ հոդվածի 1-ին մասի իրավակիրառական պրակտիկան ՀՀ Սահմանադրությանը համապատասխանության տեսանկյունից խնդրահարույց է:

Ամփոփելով վերոգրյալը՝ Կենտրոնը գտնում է.

- **Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգրքի 223-րդ հոդվածի 1-ին մասը համապատասխանում է Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 61-րդ հոդվածի 1-ին մասին և 63-րդ հոդվածի 1-ին մասին,**
- **Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգրքի 223-րդ հոդվածի 1-ին մասի իրավակիրառական պրակտիկան չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 61-րդ հոդվածի 1-ին մասին և 63-րդ հոդվածի 1-ին մասին:**

Կենտրոնի համակարգող՝

Լյուդվիկ Դավթյան